ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ջրաշեն, (091)210964, (093)802855, jrashengp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 4

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ << ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու թիվ 2 արձանագրության օրակարգը:
Օրակար1. Ջրաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը 2016թ.-ի տեղական բյուջեի տարեկան կատարողականի մասին :
Օրակարգ2. Ջրաշեն համայնքի 2017թ.-ի տեղական տուրքեր ու վճարների դրույքաչափերը սահմանելու և Ջրաշեն համանքի 2016թ.-ի դեկտեբերի 2-ի թիվ 25-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԿԱՄՈ
5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՂԱՋԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ջրաշեն, (091)210964, (093)802855, jrashengp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՈՂՈՐԴՈՒՄԸ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ << ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՐՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ջրաշեն համայնքի 2016թ-ի բյուջեի կատարողականը գնահատել լավ և հաստատել բյուջեի եկամտային և ծախսային մասերը հետյալ տեսքով

Վարչական բյուջեի եկամուտները	պլան	փաստացի	կատ. %
1. Հարկային եկամուտներ	6573.0	6763.3	103
նույն թվում			
հողի հարկ	2980.0	3007.8	101
նույն թվում			
հողի հարկ ֆիզիկական անձանցից	2980.0	3007.8	101
իրավաբանական անձանցից			
գույքահարկ	3530.0	3692.3	105
նույն թվում			
գույքահարկ կազմակերպություններից	120.0	184.9	154
գույքահարկ քաղաքացիներից	160.0	174.3	108
գույքահարկ փոխադրամիջոցներից	3250.0	3333.0	102
տեղական տուրքեր	63.0	63.0	100
նույն թվում			
ծխածոտի և խմիչքի վաճառքի թույլտվություն	48.0	48.0	100
շինարարության թույլտվություն	15.0	15.0	100
2. Ոչ հարկային եկամուտներ	780.0	780.9	100
3. Դոտացիա պետբյուջեից	30568.0	30568.0	100
4. Քաղ. Գույքի օրինականացման վճար	-	686.5	
5. Տեղական վճար	-	5.8	

6. Ընդհամենը վարչական բյուջե	38037.1	38920.6	102.3

Ֆոնդային բյուջե

1. Վարչական բյուջեի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե	8851.6
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	79.7
3. Հողի օտարումից մուտքեր	602.2
4. Կառ. կողմից նվիրատվություն	2000.0
Ընդամենը	11533.5

Ծախսային մաս

	պլան	փաստացի	կատ. %
1. 01.01.01.51 Կառավարման մարմնի պահպանում			
4111-աշխատավարձ	12450.0	12392.0	99.5
4112-պարգևատրում	1018.0	1018.0	100
4212-էներգետիկ ծառայություն	666.1	498.0	75
4213-կոմունալ ծառայություն	70.0	63.0	90
4214-կապի ծառ. (ինտերնետ, հեռախոսավճար)	300.0	257.0	86
4215-ապահովագրական ծառ.	60.0	33.0	55
4221-գործողում	50.0	26.0	52
4231-վարչական ծառայություն	320.0	300.0	94
4232-համակարգչային ծառ.	150.0	72.0	48
4233-մասնագիտ. զարգացման ծառ.	30.0	30.0	100
4234-տեղեկատվական ծառ. (թերթ. բաժանորդ.)	220.0	175.7	80
4235-կառավարչական ծառ.	20.0	-	-
4241-մաս. ծառ.	150.0	-	-
4251-շենքերի ընթ. նորոգում	800.0	-	-
4252-մեքենայի ընթ. նորոգում	250.0	116.0	46
4261-գրասենյակային ապրանքներ	240.0	156.0	65
4264-տրանսպորտային նյութեր	920.0	860.0	93
4267-տնտեսական նյութեր և սնունդ	570.0	378.0	66
4823-պարտադիր վճարներ	80.0	23.2	29
Ընդամենը	18364.1	16398.7	89
2. 01.06.01.55. գույքի նկատմամբ իրավունքի գրանցում			
4241-մասնագիտական ծառայություն	300.0	180.0	60
4819-համայնք. միության անդամավճար	40.0	21.0	52
3. 06.04.01.55. արտաքին լուս. ցանցի շահագործում			
4212-էներգետիկ ծառայություն	700.0	694.0	99
4241-մասնագիտական ծառայություն	140.0	100.0	71
4251-ընթացիկ նորոգում	900.0	848.2	94
4269-հատուկ նպատակային նյութեր	200.0	198.5	99
Ընդհամենը	1940.0	1840.6	95
4. 05.01.01.51. աղբահանություն	1560.0	1480.0	95
4213-կոմունալ ծառայություն	1440.0	1440.0	100
4264-տրանսպորտային նյութեր	120.0	40	33
5. 07.02.01.51. մասն. բժշկական ծառ.	300.0	220.0	73

	4638-դրամաշնորհ	300.0	220.0	73
6.	10.07.01.55. նվիրատվություն կազմակերպություններին	350.0	190.0	54
	4819-նվիրատվություն կազմակերպություններին	350.0	190.0	54
7.	10.07.01.54. սոց. անապահով անձանց աջակցություն	2400.0	2043.3	85
	4726-թաղման նպաստ	600.0	400.0	
67				
	4729-նպաստներ բյուջեից	1800.0	1643.0	91
8.	08.02.04.51. մշակույթային միջոցառումների իրակ.	3952.0	3414.1	86
	4111-աշխատավարձ	2700.0	2689.3	99.5
	4112-պարգևատրում	222.0	222.0	100.0
	4239-ընդ. բնույթի այլ ծառ	450.0	84.8	19
	4267-տնտեսական նյութեր	80.0	-	-
	4269-հատուկ նպատակային նյութեր	500.0	418.0	84
9.	08.02.05.62. թատերական ներկայացում	150.0	58.0	38
	4239-ընդհանուր բնույթի այլ ծառ	150.0	58.0	38
10.	09.01.01.51. նախադպրոցական ուսուցում	600.0	438.2	73
	4637-դրամաշնորհ	400.0	330.0	83
	4269-հատուկ նպատակային նյութեր	200.0	108.2	54
11.	05.02.01.51 կենսաբազմազանութ. և բն. պահպ	100.0	100.0	100
	4239-ընդ բնույթի այլ ծառ.	100.0	100.0	100
12.	11.01.02.51. վարչ. բյուջեի պահ. ֆոնդ			
	4891-պահուստային ֆոնդ	4881.0	4881.0	
	ընդամենը ծախսեր	36737.1	26383.7	71.8
14.	հատկացում ֆոնդային բյուջե	1300.0		
	վարչական բյուջեի մնացորդ	11236.9		
	Ֆոնդային բյուջեի ծախսերը			
	01.01.01.51. կառավարման մարմնի պահպանում			
	5122-վարչական սարքավորումներ	702.3	222.0	32
	08.04.02.55. մշակույթի և կրոնի գծով աշխատանքներ			
	5134-քարտեզագրում	950.0	950.0	100
	5112-շենք շինությունների կառուցում	1050.0	1050.0	100
	04.03.02.51. միջուկային վառելիք			
	5112-գյուղի գազաֆիկացում	9631.3	9486.0	98
	5134-նախագծա նախահաշվային ծախսեր	500.0	500.0	100
	ընդհամենը ֆոնդային բյուջեի ծախսեր	12833.6	12208.0	95
	ֆոնդային բյուջեի մնացորդ	625.5		

ֆոնդային բյուջեի մնացորդ 625.5

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԿԱՄՈ
5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ջրաշեն, (091)210964, (093)802855, jrashengp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ << ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԿՈՏՈՎ , << ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 72-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Ջրաշեն համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 2-ի թիվ 25-Ն որոշումը :
2. Հաստատել Ջրաշեն համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը հետևյալ տեսքով

1, Ջրաշեն համայնքի տարածքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետությանօրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյությունունեցողշենքերիևշինություններիվերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացմանևբարեկարգմանաշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200000 դրամ.

5) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին ,2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկված են << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներում առկա 0,5 գործակցի կիրառմամբ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

դ. խաղատների համար՝ 600000դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 300000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 120000 դրամ.

11)համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի 666օբյեկտի համար՝ 7000 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21000 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1100 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

12)ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.
դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամարսահմանվածտուրքի 25 %-իչափով .

զ.
եթեարտաքինգովազդտարածողգովազդակիրըտեղաբաշխելևտարածելէիրկազմակերպությանգովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամարսահմանվածտուրքի 10 %-ի չափով .

13)Ջրաշեն համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

14)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

15)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

16)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

17)Սույն հոդվածի դրույքաչափերը բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերի ՝ << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի համաձայն Ջրաշեն համայնքում սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,3 գործակցի կիրառմամբ :

2.Ջրաշեն համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1) համայնքիտարածքումշենքիկամշինությանարտաքինտեսքըփոփոխողվերակառուցմանաշխատանքներկատարելուհետկապվածտեխնիկատնտեսականպայմաններմշակելուևհաստա

տելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազարդրամ .

2) ճարտարապետաշինարարականնախագծայինփաստաթղթերովնախատեսված՝շինարարությանթույլտվությունպահանջող,բոլորշինարարականաշխատանքներնիրականացնելուցհետո՝ շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանցվերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումնուբարեկարգումը) կառուցմանավարտըավարտական ակտով փաստագրմանձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարականնախագծայինփաստաթղթերովնախատեսված աշխատանքներնավարտելուց հետո շահագործմանթույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ .

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ մեկ հարյուր դրամ .

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ .

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել 0 դրամ .

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 5000 դրամ .

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև 1000 դրամ փոխհատուցման վճար.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԿԱՄՈ
5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՂԱՋԱՐՅԱՆ**